«ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔ» ԾՐԱԳՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԲԱՆԱԽՈՍ

1999 03 10 Թիվ 24

1999 02 10

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ



Անցումային հասարակություն ասելով նկատի ունեմ այն 26 պետությունները, որոնք Խորհրդային Միության փլուզումից հետո հնարավորություն ստացան և փորձում են անցում կատարել սոցիալիստական, պլանային տնտեսությունից, վարչա-հրամայական կառավարման համակարգից ժողովրդավարական-շուկայական համակարգի: Խնդիրն ամբողջական ըմբռնելու առումով ենթադրվում է պատասխանել հետևյալ երեք հարցադրումներին. ինչպիսին է ժառանգած բեռը, ստեղծված իրավիճակի ախտորոշումը և կանխատեսումների հիման վրա անելիքների ճշգրտումը:

ժառանգած բեռը

Մեծն Քեյնզը գրում էր. «Դժվարությունը նոր գաղափարների ընմբռնման մեջ չէ, այլ հներից հրաժարվելու»: Մեր մեծամասնությունը դաստիարակված է այնպես, որ հինն ամուր ամրապնդված է մեր գիտակցության բոլոր անկյուններում: Աշխատելով այս թեմայի վրա, ես փորձում էի քննադատաբար վերլուծել այն, ինչ կատարվել է մեզանում և, ինչը շատ կարևոր է, գնահատել այն օրինաչափությունները, որոնք դրսևորվում են նշված 26 պետություններում, այդ թվում՝ 15 նախկին խորհրդային հանրապետություններում: Կներկայացնեմ միայն որոշ գնահատականներ:

Անցումային գործընթացները լոկ բարեփոխումներ չեն, այլ խորը, համակարգային բնույթի փոփոխություններ, որոնք առնչվում են հասարակության կյանքի բոլոր ոլորտների հետ՝ մշակութային, բարոյահոգեբանական, սոցիոլոգիական, էթնո-սոցիոլոգիական, տնտեսական, քաղաքական և այլն: Եվ այս բոլորը մենք պետք է դիտարկենք հետևյալ սահմանափակող գործոնների ներքո, որոնց ճիշտ գնահատականը հնարավորություն է տալիս նաև կառուցել ճիշտ տնտեսական քաղաքականության, պետության կառուցման մոդել:

Առաջին սահմանափակող գործոնը տարածաշրջանում առկա ռազմաքաղաքական հակամարտությունների առկայությունն է, որոնք ունենալու են երկարաժամկետ բնույթ, և որպես դրա հետևանք՝ տնտեսական ռիսկի բարձր աստիճանը: Հաջորդ սահմանափակող գործոնն արտաքին աշխարհի հետ կապող տրանսպորտային հաղորդակցման ուղիների անբավարար վիճակն է: Երրորդը՝ ժողովրդավարական ավանդույթների և նոր ազգային արժեքների բացակայությունը: Մյուսը՝ տնտեսության միակողմանի կառուցվածքը, հսկա, բայց անարդյունավետ գործող, անհեռանկար ձեռնարկությունների մեծ թիվը, որոնք կարող էին գործել միասնական սոցիալիստական տնտեսա-

կան ճամբարում: Այուս սահմանափակող գործոնը տնտեսության մենաշնորհացման բարձր աստիճանն է և այլն:

Անցումային փուլի առանձնահատկություններն ունեն ունիվերսալ բնույթ: Դրանք այս կամ այն չափով հատուկ են բոլոր այն հասարակություններին, որոնք ցանկանում են. վերաիմաստավորել և վերագնահատել անցած ուղին, ստեղծել նոր արժեքների և չափանիշների համակարգ, իրականացնել գների ազատականացում, ապահովել սեփականության բազմազանություն, ներդնել մարդու իրավունքների իրականացման լիակատար մեխանիզմներ: Այլ կերպ ասած, վերադառնալ քաղաքակիրթ մարդկության պատմություն:

Ընդհանրական թեզերով փորձենք թվարկել այդ օրինաչափությունների դրսևորումները: Ա)նոր և հին մեխանիզմների հարաբերությունների օբյեկտիվ հակասությունների ցավոտ դրսևորումներ: Բ)ցնցումային իրավիճակներ, ընդհանուր անկայունություն: Գ)տնտեսական արդյունավետության գնահատման չափանիշների փլուզում, նոր համակարգերի ձևավորում, որոնք դեռևս լիաթոք չեն գործում և հնարավորություն չեն տալիս ամբողջական գնահատել իրավիճակը: Մասնավորապես՝ վիճակագրության բացակայություն, հաշվապահական նոր ստանդարտների ներդրման ձգձգում, վճարային հաշվեկշռի գնահատման բացակայություն և այլն: Դ)տնտեսական հզոր ներուժի թվացյալ բնույթ: Ե)կառավարման համակարգի թուլացում, քանի որ փորձ է կատարվում հին համակարգից հրաժարվել և միևնույն ժամանակ պետությունը չի կարողանում ստեղծել նոր համակարգ, որի կառավարումը կիրականացնի նոր կանոններին համապատասխան: Զ)պետության նախաձեռնող դերի անհրաժեշտությունը շուկայական ենթակառուցվածքների ձևավորման գործում, քանի որ անցումային փուլում անհրաժեշտություն է առաջանում ենթակառուցվածքների միջոցով ստեղծել արհեստական միջավայր, որը հնարավորություն է տալիս զարգանալ մասնավոր տնտեսություն իրականացնող սուբյեկտներին: Է)օտարերկրյա ներդրումների խիստ անհրաժեշտությունը, որն այս փուլում հիմնականում իրականացվում է միջազգային կազմակերպությունների ու դոնոր երկրների միջոցով և հիմնականում ուղղվում է ենթակառուցվածքների ստեղծմանը: Ը)տնտեսության անկումը, որը դրսևորվել է գրեթե բոլոր 26 անցումային պետություններում տարբեր ուժով, տարբեր աստիճանի՝ 15%-ից մինչև 80-85%: Արձանագրվել են բարձր սղաճային երևույթներ, երբեմն՝ հիպերսղաճային, ինչպես նաև՝ արտաքին պարտքի կտրուկ աճ: Թ)հին տնտեսական կապերի փլուզումը տեղի է ունենում ավելի արագ տեմպերով, քան նոր տնտեսական կապերի ստեղծումը: Ժ)շուկայական տնտեսությունում գործունեություն ծավալելու փորձ ունեցող կադրերի բացակայությունը:

> *«Դժվարությունը նոր գաղափարների ընմբռնման մեջ չէ, այլ հներից հրաժարվելու»:*

Հիմնախնդիրներից է սեփականաշնորհման հետևանքով ռեալ սեփականատերերի ի հայտ բերելը, քանի որ առաջին փուլում, երբ իրականացվում է սեփականաշնորհումը, սեփականությունը հայտնվում է ոչ թե այն սուբյեկտների ձեռքում, ովքեր ի վիճակի են այդ տնտեսությունը կառավարել, տնօրինել և տիրապետել, այլ շատ հաճախ նրանց ձեռքում, ովքեր այդ փուլում ունեն պետական լծակներ կամ դրան են հասնում անօրինական ճանապարհով:

Հաջորդ առանձնահատկությունն այն է, որ այս պետություններում բացակայում են ժողովրդավարական ավանդույթները, քաղաքական և հասարակական համաձայնության ձեռք բերման մեխանիզմները բավականին թույլ են, ինչը, շատ հաճախ, խոչընդոտում է տնտեսական բարեփոխումների իրականացմանը:

Հաշվի առնելով այս օրինաչափությունները, միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ այս անցումային փուլում կարևորվում է տեղական առանձնահատկություններից ելնելով տնտեսական խնդիրների

Տիգրան Սարգսյանը ծնվել է 1960 թվականի հունվարի 29-ին, Կիրովականում:
1977 թվականին ավարտել է Երևանի Պուշկինի անվան միջնակարգ դպրոցը, 1980-ին՝ Երևանի Ժողտնտեսության ինստիտուտի ժողտնտեսության պլանավորման ֆակուլտետը:
Եռամյա ուսումնառությունից հետո, 1983թ. կարմիր դիպլոմով ավարտել է Սանկտ-Պետերբուրգի Ն. Վոզնիսեցկու անվան ֆինանսա-տնտեսագիտական ինստիտուտը: 1983-87-ը եղել է նույն ինստիտուտի ասպիրանտ, պաշտպանելով «Տարածաշրջանային սոցտնտեսության զարգացման պլանավորումը՝ Հայաստանի օրինակով» թեմայով թեկնածուական թեզ:

1987-1990 թթ. աշխատել է տնտեսության և պլանավորման գիտահետազոտական ինստիտուտում՝ որպես միջազգային տնտեսական կապերի վարչության պետ:

1988-93 թթ. եղել է երիտասարդ մասնագետների և գիտնականների հանրապետական խորհրդի նախագահը, 1990-91-ը՝ տնտեսական բարեփոխումների հիմնախնդիրների շուրջ բանկիրների համար մշտապես կազմակերպվող սեմինարների համակարգող:

1993-94 թթ. դասախոսել է Երևանի պետական համալսարանում:

1990-95 թթ. եղել է ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, ֆինանսա-բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ:

1995 թվականից մինչ օրս Հասարակական վերափոխումների գիտահետազոտական ինստիտուտի տնօրենն է:

1995-98 թթ. եղել է Հայաստանի բանկերի ասոցիացիայի նախագահը:

1998 թվականի մարտի 3-ից ՀՀ Կենտրոնական բանկի նախագահն է:

Տասը գիտական հոդվածի, տասից ավելի գիտական ակնարկների հեղինակ է:

Մայրենիից բացի տիրապետում է նաև ռուսերեն, անգլերեն և իսպաներեն լեզուներին:

Ամուսնացած է, ունի դուստր:

հաղթահարման ոչ ստանդարտ լուծումների և քայլերի անհրաժեշտությունը: Այն երկրները, որոնք կարողանում էին սեփականաշնորհման մոդելը, բարեփոխումների իրականացման արագությունը, հերթականությունն ընտրելիս առավել արդյունավետ հաշվի առնել տեղական առանձնահատկությունները, կարողանում էին առավել հաջողությունների հասնել:

Նկատի ունենալով սահմանափակող գործոններն ու գնահատելով օրինաչափությունները, հնարավորություն է ստեղծվում պատասխանել այն հարցին, թե ինչպիսի տնտեսական մոդել պետք է կառուցվի այս կամ այն երկրում, որն ապահովելու է միջազգային տնտեսական գործընթացների ինտեգրացիան այդ երկրին:

«Գրեթե բոլոր բնագավառներում մենք ունենք լուրջ բացթողումներ և ոչ հետևողական միջոցառումների իրականացում:»

Հիմնախնդիրների ախտորոշումը

Դարձյալ հիշատակենք Քեյնզին, որը գրում էր. «Կարևորն այն է, որ իշխանությունները որպես նպատակ որոշեն գների կայունությունը և դրան հասնեն բոլոր առկա միջոցներով: Պետության նպատակաուղղված քաղաքականության առաջնային խնդիրը պետք է դարձնել արժեքային այն ցուցանիշների կայունության ապահովումը, որոնցով արտահայտվում է խնայողությունների մեծությունը»: Այս երկու պնդումներն այսօր խիստ արդիական են Հայաստանում:

Տնտեսական ակտիվությունն ու իրավիճակը պայմանավորված են հետևյալ գործոններով. առաջինը՝ արդյունաբերության տեսակարար կշռի և ֆիզիկական ծավալների կրճատմամբ: Սրա հետևանքով ՀՀ-ում այսօր առաջնային նշանակություն են ստացել սպասարկման, առևտրի, գյուղատնտեսության բնագավառները, որոնց տեսակարար կշիռը վերջին տարիների ընթացքում կայուն ավելանում է համախառն ներքին արդյունքում: Հաջորդը՝ ներմուծման երեք անգամ գերազանցումն է արտահանմանը, որը նույնպես գերխնդիր է, եթե մենք դիտարկում ենք երկրի վճարային հաշվեկշիռը: Մյուսը՝ վտանգավոր կախվածությունն է արտասահմանյան փոխանցումներից, որոնք հիմնականում ընթացիկ հաշվի ճեղքվածքի փակման աղբյուրն են և որոնք ունեն անկանխատեսելի վարքագիծ: Այն տատանումները, որոնք տեղի են ունենում Հայաստանում, հիմնականում պայմանավորված են այդ անկառավարելի փոխանցումների ավելացմամբ կամ նվազեցմամբ, որոնք էլ հիմնականում պայմանավորված են արտաքին գործոններով:

Դեռևս ցածր են կապիտալ ներդրումները մասնավոր հատվածում: Ուղղակի օտարերկրյա ներդրումների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 1997-98թթ. կազմել է մինչև 3%, որն, իհարկե, բավարար չէ այն խնդիրները լուծելու համար, որոնք այսօր մեր առջև ծառացած են:

Հաջորդը՝ ցածր աշխատավարձը և կենսաթոշակների մակարդակն է, որոնք 1995-98 թթ. ունեցել են չնչին աճ: Սա վկայում է եկամուտների անհավասարաչափ բաշխվածության մասին, որը նույնպես լուրջ խնդիր է ոչ միայն Հայաստանի, այլև մյուս անցումային պետությունների համար: Մեզանում կենսաթոշակների մակարդակը 1995 թվականից, կազմելով 2359 դրամ, 1998-ին հասել է միայն 3700 դրամի: Հասկանալի է, որ սա լրջագույն սոցիալական խնդիրներ է ստեղծում:

Հիվանդությունների ախտորոշման համար կարևոր է, թե կա՞ն արդյոք բնագավառներ, որտեղ, այնուամենայնիվ, պետությանը հաջողվել է համակարգային բարեփոխումներ իրականացնել և քաղել դրական պտուղներ: Այդ իսկ առումով կարևոր է վերլուծել Հայաստանում բանկային համակարգի կայացման գործընթացը և տեսնել հաջողությունների հիմնապատճառները, որոնք նույնպես կթվարկենք թեզերի կարգով:

Առաջինը Կենտրոնական բանկի անջատումն էր կառավարությունից և նրա անկախությունը, լիազորությունների և պատասխանատվության հստակեցումը: Երկրորդը՝ բանկերի մասնավորեցումն էր, երբ ի հայտ եկան սեփականատերեր, որոնք սկսեցին լիակատար պատասխանատվություն կրել բանկերի գործունեության համար: Հաջորդը միջազգային չափանիշներին համապատասխան օրենսդրական դաշտի ստեղծումն է: Չորրորդը՝ արտասահմանյան ներդրումների մեծ ծավալն է, որոնց տեսակարար կշիռն ընդհանուր կապիտալում այսօր կազմում է շուրջ 45%: Հինգերորդը՝ Կենտրոնական բանկի անմիջական մասնակցությունն է բանկային ենթակառուցվածքների ստեղծման գործում: Մյուսը՝ խիստ նորմատիվային դաշտի և խիստ վերահսկողության առկայությունն է ու բանկային համակարգում ստվերային հատվածի նվազեցումը: Հաջորդը՝ դրամա-վարկային քաղաքականության ուղղվածությունն է գների կայունության ապահովմանը: Ութերորդը՝ կադրերի վերապատրաստումն ու պատրաստումն է:

Այս ուղղությունները միևնույն ժամանակ հնարավորություն են տալիս ախտորոշել, թե ինչպիսի հիվանդություններ կան այսօր ռեալ սեկտորում, քանի որ, ըստ թվարկված թեզերի, գրեթե բոլոր բնագավառներում մենք ունենք լուրջ բացթողումներ և ոչ հետևողական միջոցառումների իրականացում: Այնուամենայնիվ, նման հետևողական մոտեցումը հնարավորություն է տալիս ապահովել թափանցիկ, վերահսկելի, կառավարվող, կայուն համակարգ:

Հայաստանը, լինելով փոքր և բաց երկիր, ունենալով վճարային հաշվեկշռում մեծ ճեղք և արտաքին պարտք, իր ապագան կերտելիս պարտավոր է հիմնական ուշադրությունը բևեռել հետևյալ խնդիրների վրա.

Ա) ինստիտուցիոնալ բարեփոխումների ավելի արագ ընթացքի, երկրի ֆինանսական կայունության և միջազգային կառույցների ինտեգրացման ավելի արագ տեմպերի ապահովմանը, որը հնարավորություն կտա օգտագործել այն հարաբերական առավելությունները, որոնք մենք ունենք տարածաշրջանում:

Բ) ինչպես այս ամենն իրականացնել և, միգուցե, նաև՝ ինչու: Այստեղ մենք պետք է անդրադառնանք գլոբալիզացիայի խնդրին կամ 21-րդ դարի օրինաչափություններին, որոնք պետք է դրսևորվեն կամ մեկ այլ՝ արագ փոքրացող աշխարհի կոնցեպցիային:

Այստեղ ուզում եմ հիշեցնել Պիտեր Բրաունինգի իմաստությունը, որը նա որդեգրում է հին մոնիտարիստներին. «Ավելի լավ է այն տեսությունը, որը հնարավորություն է տալիս կանխատեսել և ոչ թե այն, որը միայն բացատրում է»: Այժմ փորձենք կանխատեսել:

Նախ՝ ինչ է գլոբալիզացիան: Միջազգային հարաբերությունների խորացում և ընդլայնում սարսափելի արագ տեմպերով՝ առևտրի, ֆինանսական և ինֆորմացիոն ոլորտներում՝ միասնական, համալիր, գլոբալ շուկայի ներքո: Ազգային և գլոբալ շուկաների ազատականացումը ստեղծելու է առավել բարենպաստ պայմաններ տնտեսական աճի և ժողովուրդների բարգավաճման համար: Սա՝ առաջին աքսիոմը և կանխատեսումը: Այն պետությունները, որոնք սա ավելի շուտ գիտակցեն և հասկանան, ավելի արագ կքաղեն բարգավաճման պտուղները: Բայց այս գործընթացը տարբեր պետությունների համար ունենալու է տարբեր արագություն, և առավել հաջողության կհասնեն այն պետությունները, որոնք ճիշտ կկողմնորոշվեն հետևյալ գործոնները հաշվի առնելիս. Ա)բնական և արհեստական խոչընդոտներն ազգերի միջև հաղթահարվում են և հաղթահարվելու են 21-րդ դարում շատ ավելի արագ տեմպերով: Եվ եթե կա թյուրըմբռնում այս հարցում, դա միայն խոչընդոտելու է ազգային պետություններին՝ իրենց քաղաքականությունն իրականացնելիս:

«Ազգային և գլոբալ շուկաների ազատականացումը տնտեսական աճի և ժողովուրդների բարգավաճման համար ստեղծելու է առավել բարենպաստ պայմաններ:»

Էապես էժանանում են կապի և տրանսպորտային միջոցները: Օդային և ծովային փոխադրումներն էժանացել են մի քանի անգամ, և այս գործընթացը շարունակվելու է: Հեռախոսներից օգտվելը, Ինտերնետը, դառնում են սովորական երևույթներ, և սրանց գները նույնպես էժանանում են: Աշխարհում վերջին տասնամյակի ընթացքում հեռախոսների գները էժանացել են 80%-ով, և այդ գործընթացը ևս շարունակվելու է: Օգտվողների քանակը տարեկան աճում է մի քանի անգամ:

Առևտրի բնագավառում վերանում են բոլոր տեսակի սահմանափակումները: Եթե 1947թ. համաշխարհային առևտրում տարիֆները կազմում էին 47%, 1980թ. 6%, ապա այսօր խնդիր է դրված հասցնել 3%-ի, իսկ 21-րդ դարում դրանք ընդհանրապես վերանալու են: Առևտրի ծավալները պատերազմից հետո ավելացել են 12 անգամ և այսօր կազմում են շուրջ 5 տրիլիոն դոլար՝ տարեկան:

Ֆինանսական համակարգում արձանագրվել է կապիտալի հոսքերի կտրուկ աճ: Վերջին 25 տարվա ընթացքում ծավալային առումով այդ հոսքերն ավելացել են 1200 անգամ: Միևնույն ժամանակ, այս բնագավառում տեղի է ունենում նաև կառուցվածքային փոփոխություն: Եվ այստեղ շատ կարևոր է անցումային պետությունների համար գնահատել ոչ միայն ծավալները, այլև որակը, և թե ուր են հոսում, ինչպիսի հակվածություն ունեն այդ կապիտալները: Նամանավանդ, որ այդ շուկաները դառնում են միասնական և վերահսկելի, գործում են միասնական ստանդարտների ներքո:

Չորրորդը՝ գլոբալ տեխնոլոգիաների զարգացումն է, որը միաժամանակ ֆինանսական և տնտեսական ինտեգրացման գործընթացների համար ստեղծում է բարենպաստ պայմաններ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գլոբալ տեխնոլոգիաների զարգացման տեմպերը չափազանց բարձր են, մենք կարող ենք կանխատեսել, որ զարգացումները մոտակա տարիների ընթացքում ունենալու են սարսափելի մեծ արագություն: Գործարքները տնտեսական և ֆինանսական բնագավառներում այսօր իրականացվում են մեկ ակնթարթում: Եթե նախկինում տեխնոլոգիաները հիմնականում կուտակվում էին զարգացած երկրներում, այսօր ակնհայտորեն դրսևորվում է մի երևույթ, որով այդ տեխնոլոգիաների արտադրությունը տեղափոխվում է նաև անցումային հասարակություններ:

Գլոբալիզացիան անխուսափելիորեն արտահայտվում է նաև մշակույթի բնագավառում: Ձևավորված ինֆորմացիոն միասնական համակարգն անխուսափելիորեն բերում է միասնական ստանդարտների երաժշտության, հագուստի, ուտեստեղենի, ֆիլմերի, արժեքների միաձուլման, գաղափարների և մտածողության մեջ, երեխաներն այսօր նույն խաղերն են խաղում, նույն խաղալիքներով: Եվ այս ամենի տարածումը կատարվում է չափազանց արագ տեմպերով: ԱՄՆ-ն տարեկան 150000ժամ հեռուստահաղորդումներ է արտահանում: Երաժշտությունը և մշակույթը դառնում են միասնական, միևնույն ժամանակ տեղի է ունենում ազգայինի և միջազգային ստանդարտների միաձուլում: Նույնիսկ հանցագործության բնագավառում նկատվում է միասնականություն, քանի որ հանցագործությունների պատճառները դառնում են նույնը, և հանցագործությունների դրսևորումները ըստ երկրների ու դրանց դեմ պայքարի ձևերը դառնում են նույնը:

Այս ամենը հնարավորություն է տալիս պնդել, որ աշխարհը դառնում է չափազանց փոքր: Այդ առումով անցումային հասարակությունների առջև առաջանում են լուրջ պրոբլեմներ: Առաջինը՝ ինչպիսի՞ ազդեցություն է մեզ վրա թողնում անհավասարությունների հաղթահարումը, դիսբալանսների, որակական և քանակական անհամադրությունների փոփոխությունը: Վերջին տարիների ճգնաժամերը, որոնք տեղի են ունենում Մեքսիկայում, Արևելյան Ասիայում, Բրազիլիայում, Արգենտինայում, Ռուսաստանում, ըստ իս, կարելի է բացատրել նաև գլոբալիզացիայի երևույթների ազդեցությամբ, քանի որ այս երկրները հաճախ պատրաստ չէին լինում կապիտալի ներհոսքի և արտահոսքի նման արագությանը, տեխնոլոգիաների և շուկաների նման լուրջ ազդեցությանը տնտեսական համակարգերի վրա:

Վերլուծելով վերջին տարիներին այս բնագավառին վերաբերող հիմնական քաղաքականությունը որոշող կառույցների, մասնավորապես՝ Միջազգային արժութային հիմնադրամի, Բազելյան կոմիտեի նյութերը, Դավոսի համաժողովի հիմնական գնահատականները, կարող ենք գնահատել հետևյալ զարգացման հիմնական ուղղությունները. Միջազգային ստանդարտների մշակում և ներդնում, մասնավորապես՝ հաշվապահական հաշվառման, բանկային նորմատիվների, փոխանցումների կանոնակարգում և այլ տիպի ֆինանսական գործառնություններում փողի ու կապիտալի շուկաների գլոբալիզացիա և ազգային շուկաների հետ նրանց ինտեգրացման մեխանիզմների մշակում: Միջազգային տնտեսական կազմակերպությունների դերի ուժեղացում, մասնավորապես՝ Համաշխարհային բանկի, Արտարժութային հիմնադրամի, Եվրոբանկի և այլ միջազգային կառույցների կտրուկ ուժեղացում, որոնք ստեղծում և ներդնում են միջազգային

ստանդարտներ, իրականացնում են միջազգային գործընթացների կառավարումը: Հաջորդը՝ միջազգային տնտեսական ստանդարտների կոշտացում, հատկապես՝ ֆինանսական և վարկային բնագավառներում, ինչը հնարավորություն կտա խուսափել անցանկալի հետևանքներից և ճգնաժամերից:

Հինգերորդ՝ ազգային տնտեսությունների կառավարման մեխանիզմների ունիֆիկացիա: Սա չափազանց կարևոր է հենց Հայաստանի համար, քանի որ, եթե մենք կարողանանք ապահովել թափանցիկությունը և իրականացվող քաղաքականության միջազգային միտումների հետ համահունչ լինելը, կհաջողվի լուծել երկու կարևորագույն խնդիր: Առաջինը՝ ենթակառուցվածքների արագ տեմպերով զարգացում, որը նաև կապահովի ֆինանսական կայունություն, երկրորդը՝ կապիտալի ներհոսք, որի խիստ կարիքը ունի Հայաստանը: Դրա համար պետք է իրականացնել հետևյալ միասնական պահանջները. պետբյուջեի նվազագույն դեֆիցիտի ապահովում, լողացող փոխարժեքի քաղաքականություն, ընթացիկ հաշվի դեֆիցիտի կրճատում, սղաճի ցածր մակարդակի ապահովում, ֆինանսական շուկաների կոշտ վերահսկում, բանկերի և ձեռնարկությունների սերտաճման բացառում, պետության կողմից տնտեսական ռիսկերի բնագավառում միջամտության նվազեցում, իսկ հետագայում՝ ընդհանրապես բացառում, քվազիֆինանսական ինստիտուտների ձևավորման բացառում և խոչընդոտում, հակադեմպինգային կամ սուբսիդավորման մեխանիզմների փուլ առ փուլ վերացում և հրաժարում: Ինչքանով մենք կկարողանանք ըմբռնել այս խնդիրների կարևորությունը և որքան արագ կկարողանանք վարվող տնտեսական քաղաքականությունը համապատասխանեցնել այս սկզբունքներին, այնքանով էլ մեզ կհաջողվի անցումային հասարակությունների մրցակցության մեջ առաջ ընկնել, լինել առջևում: Սա Հայաստանին հնարավորություն կտա 21-րդ դարում հանդես գալ որպես զարգացած երկիր:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

-Ձեր գնահատմամբ, Հայաստանում տնտեսական անկումը շարունակվո՞ւմ է, կա՞նգ է առել, թե՞ արդեն կարելի է խոսել շրջադարձից՝ դեպի զարգացում:

-Ըստ իս, այսօր մենք գտնվում ենք այն եզրի վրա, որ ճիշտ ընտրությունը մեզ հնարավորություն կտա ասել՝ մենք հայտնվելու ենք անդունդում, թե կարող ենք ապահովել կայուն տնտեսական աճ: Այսօր մենք դեռևս ունենք հարաբերական ֆինանսական կայունություն և թվացյալ տնտեսական աճ, որը նախորդ տարիների հետ համեմատած, իհարկե, արձանագրվում է: Բայց, եթե դիտարկենք այն նպատակների առումով, որը մեր առջև դնում ենք, ինչ խոսք, երաշխավորված չէ: Եվ այն կոնցեպտուալ մոտեցումները, որոնք բխում են գլոբալիզացիայից, իրականացնելու դեպքում, համոզված եմ, որ այդ աճը կլինի կայուն և հարատև:

-Ժամանակին շատ էր խոսվում Հայաստանը տարածաշրջանային բանկային կենտրոնի վերածելու ծրագրերի մասին: Այդ ծրագրերն այսօր էլ արդիակա՞ն են:

-Անշուշտ: Կարծում եմ, որ այն, ինչ ներկայացրեցի, հենց վկայում է դրա մասին: Դիտարկելով ՀՀ-ն գլոբալիզացիայի ներքո, հնարավոր է ստեղծել հարաբերական առավելություններ, որոնք թույլ կտան այս երկիրը դարձնել մեր հարևանների հետ համեմատած նախընտրելի ֆինանսական կենտրոն:

-Փողով կամ ծանոթությամբ բուհ ընդունվելը, փողով կամ ծանոթությամբ աշխատանքի ընդունվելը, փողով կամ ծանոթությամբ օրենք շրջանցելը ազգային առանձնահատկությո՞ն է, թե ոչ: Եթե այո (կամ ոչ), ապա այն ինչպե՞ս է ներդաշնակում գլոբալիզացիայի հիմնախնդիրներին:

-Նշեցի, որ հանցագործությունները նույնպես այսօր ունեն ունիվերսալ բնույթ, և, երևի թե, աշխարհում այսօր չկա մի որևէ պետություն, որտեղ այս պրոբլեմը չլինի: Պարզապես անցումային պետություններում այն ավելի սուր է արտահայտվում՝ պայմանավորված նրանով, որ մեր նման երկրներում սոցիալական բևեռացումը շատ ավելի մեծ է, ինչը բերում է այդպիսի բացասական երևույթների դրսևորմանը:

> *«Անցումային պետություններում նպատակահարմար չէ պետական կարճաժամկետ պարտատոմսերը դիտարկել որպես բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուր:»*

-Տնտեսության ոլորտում հողի և արդյունաբերական ու ոչ արդյունաբերական օբյեկտների սեփականաշնորհումից հետո որո՞նք են կառավարության հետագա անելիքները: Խնդրում ենք նշել Կենտրոնական բանկի և առևտրային բանկերի հետագա անելիքներն արտասահմանյան վարկերի, դրամաշնորհների և այլ փոխանցումների բաշխումից ու վերաբաշխումից հետո:

-Սա մի մեծ խոսակցության թեմա է: Երկու բնագավառներում էլ, անշուշտ, համալիր ծրագրերի իրականացման անհրաժեշտություն կա: Ինչ վերաբերում է բանկային համակարգին, ապա վերջերս Ազգային ժողովում հրապարակելով դրամա-վարկային քաղաքականության ծրագիրը, ըստ էության, ես շարադրել եմ այն խնդիրները, որոնք կանգնած են բանկային համակարգի առջև:

-Ի՞նչ է արվում խորհրդային տարիներին խնայդրամարկղներում եղած գումարներն ավանդատուներին վերադարձնելու ուղղությամբ:

-Այլ անցումային պետությունների համեմատ, այս խնդիրը մեր հանրապետությունում շատ ավելի սուր է, քանի որ մեզանում ազգաբնակչությունն ուներ ավելի մեծ հակվածություն խնայողություններ կուտակելու խնայբանկում, ինչը մի քանի անգամ գերազանցում էր միջին ցուցանիշը՝ նախկին ԽՍՀՄ այլ հանրապետությունների հետ համեմատած: Ակնհայտ էր, որ ԽՍՀՄ փլուզումից հետո առավել սուր այս խնդիրը պետք է դրսևորվեր հենց ՀՀ-ում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ պարտքը տարբեր գնահատականներով կազմում է 500-800 մլն. դոլար, ինչը համարժեք է մեր արտաքին պարտքի ծավալին, հասկանալի է, որ նման պետական բյուջե և համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ծավալներ ունեցող պետությունն այս խնդիրը ի վիճակի չէ լուծել: Բոլոր այն առաջարկությունները, թե հնարավոր է կարճ ժամկետում այս խնդիրները լուծել, ըստ իս, արկածախնդրային են: Պարզապես, փորձ է արվում քաղաքականացնել այս հարցը և հերթական անգամ խաբել ժողովրդին:

-Որո՞նք են հիմնական տարբերությունները Չեխիայի, Հունգարիայի, Լեհաստանի նման երկրների, որոնք արդեն անցումայինից դեպի զարգացած երկրներ են, և Հայաստանի ու մյուս երկրների, որոնք, կարծես, ընդմիշտ ֆիքսվում են որպես անցումային երկիր:

-Լեհաստանը ես կառանձնացնեի: Իսկ Հունգարիայում և Չեխիայում տնտեսական անկման տեմպերը, ինֆլյացիոն երևույթները եղել են ավելի ցածր, քան մնացած պետություններում: Այսինքն, նրանց հաջողվել է տնտեսական բարեփոխումներ իրականացնել ավելի կայուն միջավայրում, որը գերխնդիր էր: Դրա համար ես հիշատակեցի Քեյնզին, մեջբերելով գների, ընդհանրապես՝ ֆինանսական կայունության ապահովման անհրաժեշտությունը, որը ստեղծում է տնտեսական բարեփոխումներ իրականացնելու համար լավագույն միջավայր: Հաջորդը՝ բարեփոխումներն այնտեղ իրականացվել են ավելի համապարփակ և հետևողականորեն, քան ԱՊՀ երկրներում: Վերջիններում բազմաթիվ քաղաքական և սոցիալական պրոբլեմների պատճառով տնտեսական բարեփոխումները հետաձգվել են, կրել են ոչ հետևողական բնույթ, ընթացքում երկարաձգվել են և, ըստ էության, շոկը ավելի երկար է տևել, քան վերը նշված երկրներում: Կարծում եմ, սա է հիմնական պատճառը, չնայած հաճախ փորձ է կատարվում ուրիշ չափանիշներ բերել: Մասնավորապես, որ նրանք ավելի մոտ են եվրոպական պետություններին, ավանդույթներին և այլն: Ամեն ինչ, իհարկե, կարևոր է, սակայն առաջնայինն, ըստ իս, հենց վերը նշված պնդումն է:

-Չե՞ք կարծում, որ պետական պարտատոմսերի բարձր տոկոսադրույքներն արգելակում են դրամական միջոցների հոսքը դեպի ռեալ տնտեսություն:

-Անշուշտ, համաձայն եմ: Անցումային պետություններում, ըստ իս, նպատակահարմար չէ պետական կարճաժամկետ պարտատոմսերը դիտարկել որպես բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուր: Առաջին հերթին այն պետք է դիտարկել որպես ֆինանսական միջավայրի ստեղծում: Քանի դեռ մեր պետությունը չորդեգրի այս քաղաքականությունը, պետական կարճաժամկետ պարտատոմսերն ունենալու են բարձր տոկոսադրույք: Իսկ եթե բարձր եկամտաբերությունը պահպանվելու է մոտակա տարիների ընթացքում, դա նշանակում է, որ ձեռնտու չէ այս երկրում ներդրումներ անել, ավելի նախընտրելի կլինի գումար ներդնել ՊԿՊ-երի մեջ: Սա ներդրումների համար ստեղծում է ոչ բարենպաստ պայմաններ: Այսօր մեր պետության համար դա կարևոր խնդիրներից մեկն է:

ՀԻՆԳՇԱԲԹԻ, ՄԱՐՏԻ 25-ԻՆ

ՀՀ սոցիալական
ապահովության նախարար

Գագիկ Եգանյանը

ներկայացնում է

«ՀՀ սոցիալական ապահովության քաղաքականությունը»

Մարտի 25-ին, ժամը 18:00-ին

Հայաստանի ամերիկյան համալսարանի փոքր դահլիճում (5-րդ հարկ)

Մուտքն ազատ է

ԲԱՆԱԽՈՍ

«Դասախոսությունների շարք» ծրագրի տեղեկագիր

Հայաստանի ամերիկյան համալսարան
Հատուկ դասընթացների բաժին

URL:// www.aua.am/aua/extens/lectures

Ծրագրի համակարգող՝
Հրայր Զորյան

Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40
հեռ. 27-16-58

Հասցեատեր՝